

Քու. Մկառյան

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1.

«Ա՛խ, երաբ, ոս, սրտով որ գիշերը քունս կտրած, էսպես բաները գրում եմ, մուրադս տեղ կհասնի, թե չէ» —ասում է Արովյանն իր՝ մինչև վերջերս անհայտ երկերից մեկի նախարանում:

«Ի խորոց սրտի» ըխած այդ ցավագին հառաչանքը ցայտուն կերպով արտահայտում է այն տանջալի, բայց և աղնիվ զգացմունքը, որ տիրական է եղել մեծ լուսավորչի ու հայրենասերի ապրումներում նրա ամբողջ գործունեության ընթացքում:

Արովյանի այրող «մուրազն» այն էր, որպեսզի իր անքուն գիշերների ստեղծագործական տքնության արդյունքները «տեղ հասնեն»՝ համատարած խավարի մեջ խարխափող իր ճնշված ժողովրդին լուսավորելու նրա միտքը, արթնացնելու և զինելու նրան իր գոյության պահպանման և ազգային ազատագրության պայքարի համար:

Արովյանի «մուրազը», սակայն Ձեռն էր անկատար, նրա գրածները լույս աշխարհ չէին գալիս: «Մարգ տշխատում է առանց հաջողության» — ախուր, հուսահատ գանգառվում է նա՝ իր ողբերգական անհայտացումից մի քանի ամիս առաջ՝ Քրիստիան Ֆրենին գրած իր մի նամակում:

Մինչև իր «անհայտ բացակայությունը» Արովյանն ապրում էր՝ մեծ գրողի համար ծանրադույն ողբերգությունը՝ իր ստեղծագործության անհայտ մնալը ժողովրդին:

Իսկ դրա պատճառը, ըստ երևույթին ոչ միայն այն էր, որ տպադրվելու հնարավորություն չկար, այլ զլխավորապես այն, որ Արովյանի երկերի հրատարակության նկատմամբ սահմանված է եղել զրաքնության հատուկ զգուշություն ու խստություն և այդ այն հաշվով, որպեսզի նրա երկերը չտպագրվեն:

Դրանով և միայն դրանով պետք է բացատրել այն, որ մեծ լուսավորչի գրական ժառանգությունը գրեթե ամբողջապես մնացել էր անտիպ ու անհայտ նրա կենդանության օրով: Ու դրա հետևանքով էլ Արովյանին ժամանակակիցները ճանաչել են միայն ու միայն կամ գերազանցապես իբրև ուսուցիչ-մանկավարժ, իբրև ժողովրդական կրթության եռանդուն գործիչ, բայց ոչ իբրև մեծ գրող, որն իր ստեղծագործությամբ կոչված էր հայ նոր գրականության հիմքը դնելու: Եվ եթե անմահ գրողի ողբերգական անհայտացումից երկու տարի հետո՝ 1850 թ. նրա երախտավոր աշակերտ Գ. Աթրյանը և վերջինիս շնորհիվ՝ Գ. Հախվերդյանը բարեբախտ առիթ չունենային ծանոթանալու նրա գլուխ գործոց «Վերք Հայաստանի» վեպին. ու եթե վերջինս 1858 թ. էլ հրատարակված չլիներ, ապա Արովյանը

¹ Գիտ. խ. Արովյանի, Ա., էջ 129.

խորհրդով երկար ժամանակ ամբողջովին դեռ կմնար անհայտ, ինչպես դեռ անհայտ է մնում նրա ողբերգական կորստի գաղտնիքը, որի լուսաբանումը արովյանագիտության չվճարված պարտքի մեջ է մնում:

Բայց ոչ միայն այդ դժվար լուծելի «գաղտնիքը», այլև մեծ գրողի ու լուսավորչի գրական ժառանգության ամբողջական պատկերն էլ մենք չունենք նրան վերաբերող ոչ քիչ թվով հրապարակված ուսումնասիրություններում ու լրագրական հոդվածներում:

Թե ինչ է տպագրվել հեղինակի գեղարվեստական երկերից նրա կենդանության օրով և նրա մահվանը հաջորդող առաջին երկու տասնամյակում՝ 50—60-ական թվականներին, տպագրվածներից որը, ինչքան ձեռագիր է ունեցել, բացի ներկայիս պահպանվածներից,—Արովյանն էլ ուրիշ թիվներ է ունեցել, ուրոնց ոչ ձեռագրերը կան և ոչ էլ որևէ անգամ տպագրվել են, նրա հարուստ նամակագրությունից կոնկրետ ի՞նչ է պակասում, նրա գրած նամակներից ու թղթակցություններից, օրագրական տետրերից ինչքանը մեզ չի հասել, և այլն, և այլն,—ահա հարցեր, որոնց ճշգրիտ և սպառիչ պատասխանը դեռ չի տրվել մինչև հիմա, երբ մենք նշում ենք մեծ հայրենասեր դեմոկրատ-լուսավորչի ու գրողի մահվան 100-ամյա հոբելյանը:

2.

Արովյանին վերաբերող գրականությունից որոշ չափով հայտնի է «Նախաշավիղի» տպագրության պատմությունը, որին հարկ չկա այստեղ անդրադառնալու:

Սակայն ոչ ոք չի անդրադարձել այն հարցին, թե Արովյանը «Նախաշավիղի» հետո իր երկերից որն էր մտադիր առաջին հերթին հրատարակել, եթե դրա համար հնարավորություն ունենար, եթե նրա պաշտոնական-քաղաքական ու անձնական հակառակորդները չկարողանային խանդարել նրա վառ ցանկության կատարմանը՝ իր գրածները ժողովրդին հասցնելու նրա նվիրական «մոլիցիայի»:

«Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի «Հառաջաբանում» (որը ինչպես հայտնի է, գրված է 1841 թ.) Արովյանն ասում է.

«Շատ բաներ էսպես գրել, հագիր էի արել աշխարհաբար. բայց ելր սիրտ չէի անում. որ լիք քցեմ: Վախենում էի թե ժամանակս, փողս կորչի, գիրքս էլ մեկ տեղ թողումը վեր ընկած մնա, փթի: Բարեկամ մարդիկ, օր վախտ-վախտ տեսան, խորհուրդ տվին ինձ. թե շատ լավ կըլի, որ տպիլ տամ: Իրավ՝ թե որ մուրազս տեղ հասնի ու գրածս ազգին դիր զա, որքան բախտավոր կլինեմ: Ինձ ժամանակը օգնե՛ք կանեմ, որ դեռ լավ բան գրեմ. բող հս առաջիցն էսպես ուի»:¹

Արովյանի այս խոսքերը վկայում են այն մասին, որ նա՝

ա. «Շատ բաներ էսպես գրել», տպագրության համար «հագիր էր արել», մինչև 1841 թ. ներառյալ, երբ գրել է հիշյալ «Հառաջաբանը»:

բ. Որ տպագրության համար այդ «հագիր արած» երկերը բոլորն էլ աշխարհաբար են՝ գրված «մեր խալիխի» համար:

գ. Բայց Արովյանը վախեցել է իր այդ երկերը «լիս քցել», ենթադրե-

¹ Խ. Արովյան — Շավիղ երկեր, 2-րդ հատոր, 1940 թ., էջ 390: Ընդգծումներն իմն են:

լով, թե ոչ միայն իր «ժամանակն ու փողը կկորչի», այլև գուցե իր տըպ-ված «գիրքը մեկ տեղ թողումը վեր ընկած մնա, փթի», — տարածող ու կարգացող չունենա:

դ. Արուսեանի այդ վախն իմանալով՝ բարեկամ մարդիկ, որ վախտ-վախտ տեսելն են նրա աշխարհարար գրվածքները՝ խրախուսել ու «խոր-հուրդ են տվել», «թե շատ լավ կըլի, որ տպել տա»:

ե. Եվ վերջապես՝ հաստատ կարելի է ասել, որ Արուսեանն առաջին հերթին հրատարակելու էր «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն ե ոչ թե «Վերք Հայաստանին» կամ մի ուրիշը՝ նրա աշխարհարար գրվածքնե-րից:

«Թող Լ. և Խոսիկը Լ. ասելու ըլի» արտահայտութիւնը անկասկած վկա-յում է այդ մասին, որովհետեւ ասված է նույն այդ ժողովածուի «Հառաջա-բան»-ում:

Արուսեանի այդ մտադրութիւնը տեղյակ են եղել ամենից առաջ նրա աշակերտները: Ծիշտ է, Արուսեանին չի հաջողվել իր նվիրական իղձն իրա-կանացնել «լիս քցել», հրատարակել «Պարապ վախտի խաղալիքը», բայց ըստ երևույթին այնքան հաստատուն ու որոշ է եղել և այնքան տարած-ված Արուսեանի այդ մտադրութիւնը, որ նրա աշակերտները հետագայում համոզված են եղել, թե՛ իրոք Արուսեանն իր այդ մտադրութիւնը կատա-րած է եղել՝ հրատարակել իր առակների գիրքը: Այդ տեսակետից պատա-հական չէ, որ նրա հավատարիմ աշակերտներից մեկը՝ Գ. Աքիմյանը հետա-գայում՝ իր ուսուցչի մահից տասնամյակներ հետո՝ Ս. Քամալյանին թե-լադրած իր հուշերում՝ իբրև իրողութիւն է հաղորդում այն, թե Արուսեանը «վերջին այդ բաները (իր «գրած առակները՝ առասպելները») առանձին օրբով տպել տվեց, անունը գրեց «Պարապ վախտի խաղալիք», որ ժողո-վուրդն էլ աշխարհարար բան կարդա»:

«Անթիվ գրածներից, — ասում է Աքիմյանը, — մինչև Երևան տեղափոխվե-լը, իմ քաղցր և ընտիր վարժապետը տպել էր միայն «Պարապ վախտի խաղալիքը»: Ես այդ միջոցին 15 տարեկան էի»¹ Գ. Աքիմյանի այս ան-վերապահ հայտարարութիւնը դժբախտաբար մինչև օրս չի հաստատվել: Նրա ըստ երևույթին, շփոթում է «Նախաշավիղի» տպագրութիւնը «Պա-րապ վախտի խաղալիքի» հետ: Բայց գուցե և ճիշտ է, գուցե իրոք «Պարապ վախտի խաղալիքն» ևս «Նախաշավիղի»-ից հետո, նույնպես տպագրվել է: սակայն լույս չի տեսել: Համենայն դեպս, եթե դրա համար առայժմ որևէ այլ ապացույց չկա, բացի Աքիմյանի հայտարարութիւնը, այնուամենայ-նիվ այդ էլ անկասկած է դարձնում, որ Արուսեանն իր աշխարհարար եր-կերից առաջինը հրատարակելու էր «Պարապ վախտի խաղալիքը» և ոչ թե «Վերք Հայաստանին» կամ մի այլ աշխատութիւն:

Մեր այս պնդումը կարելի է մի լրացուցիչ փաստով ևս հաստատել, նորից դիմելով իրեն՝ հեղինակին: Մենք նկատի ունենք դարձյալ նույն «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի «Հառաջաբանի» նախավերջին պարբերութիւնը, որը լիակատար հիմք է տալիս պնդելու, որ տպագրու-թյան համար պատրաստ իր գեղարվեստական երկերից Արուսեանն առաջին

¹ «Ժամանակակիցները Խ. Արուսեանի մասին», կազմեց Հր. Մուրադյան, 1941 թ., էջ 112, 117:

հերթին ուզում էր ու վճռել էր հրատարակել հիշյալ ժողովածուն: Շատ հակիրճ կերպով ծանոթացնելով ապագա ընթերցողին իր սիրելի հերոսի՝ Աղասու պատմությանը, Արուստյանն այնուհետև նշում է, թե՛ սուրա (Իմա և Աղասու. Ա. Ա.) պատմությունը շատ երկար է, որ գրած մոտիս հազիր ունեմ. որ նրանով կարելի է իմանալ նաև ժամանակվա մեր աշխարհի հալը: Գրքի անունն ա Վերջ Հայաստանի, ոգը հայրենասերի: Էնպես էլ շատ սվարճալի պատմություններ աշխարհաբար դրած՝ մոտիս հազիր ունեմ: Ով գիտի, բայցի մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպել տա: Նսկարացի բոլորը ի միասին գրել, Հունգի խարչը շատ կըլեր:

Պարզ է, այս ամենը «Վերջի» և մյուս «աշխարհաբար բաների» մասին կարելի էր գրել միայն այն գրքի տոհմաբանում, որն որ ամենից շուտ էր լույս տեսնելու. որպեսզի ընթերցողները դրա միջոցով տեղեկանային, որ այդ գրքի հեղինակը տպագրության համար իր մոտ «հազիր ունի» էլի ուրիշ շատ գրվածքներ ևս, որոնք «մեկ աստվածասեր մարդու» — բարյաղակամությանն են կարոտ հրատարակության համար:

Վերահիշյալից միանգամայն պարզ է ու որոշ, որ իր առականների ժողովածուից («Պարապ վախտի խաղալիք») հետո՝ տպագրության երկրորդ հերթը «Վերջ Հայաստանի»-ինն էր, որի «լիս քցելն», ըստ երևույթին ավելի հեռավոր ու զժվար իրականանալի երազ, անկատար «մուրազ» էր թվում Արուստյանին: Վերևի քաղվածքում՝ տպագրության համար «հազիր» շատ զվարճալի պատմություններ աշխարհաբար դրած՝ ասելով՝ Արուստյանն անշուշտ նկատի ունի իր «Զվարճալի ու կարճ պատմությունք», «Կարճառոտ պատմությունք», «Իշի հարսանիք» վերնագիրն ունեցող արձակ երկերը, որոնք առաջին անգամ տպագրվել են հեղինակի երկերի 4-րդ հատորում (1947 թ.) և որոնց դրության թվականն անհայտ է:

Նկատի ունենալով «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբանի» գրության հայտնի թվականը (1841 թ.), դրա հիման վրա կարելի է ասել, որ Արուստյանի ասած այդ «զվարճալի պատմությունները» նույնպես գրված պատրաստ են ևղել մինչև 1841 թվականը:

Այս առնչությամբ կարևոր ենք համարում զոնե մասնակիորեն անդրադառնալ Արուստյանի՝ մեկ հայտնի երկերի գրության թվականները որոշելու հարցին:

Հեղինակի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի (լույս տեսած 1947 թ. վերջերին) ծանոթագրություններում անթվակիր երկերից որոշված է միայն մեկի («Վերջին հրաժարական քաջադուր արքային Հերակլին») գրության թվականը: Հատորի Ձեռագած բոլոր երկերի համար (բացառությամբ «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամայի, որի գրության թվականը հեղինակը ինքն է նշել՝ 1841 թ.) ասված է թե՛ «գրության (կամ՝ թարգմանության) թվականն անհայտ է» (տես այդ հատորի ծանոթագրությունները, էջ 319—325): Իայց ելնելով «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբանից» և հենց այդ երկերի բովանդակության տվյալներից, կարելի է հավանական համարել, որ դրանց մեծ մասը (բացառությամբ «Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց», «Պատմություն Տիգրանի» ու թերևս մեկ երկու այլ երկերի) գրված է Խրիլիսիում և այն՝ մինչև 1841 թիվը, այսինքն մինչև «Պարապ վախտի խաղալիքի» «Հառաջաբան»-ը գրելը: Իսկ «Աշխարհիկ բարբառը», «Պատմու-

թիւն Տիգրանի վեպը, «Օվսաննա» վիպակը, շատ հավանական է, որ դրվել են Երևանում՝ համեմատաբար շուտ 1843—44 թ. թ. հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 1845—1846 թ. թ.:

3.

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Արուսեանի կենդանութեան օրով տպագրվել է նրա ինքնագրային կամ քարգմանական գեղարվեստական երկերից որևէ մեկը: Մեր պրպտութիւնները ցույց տվին, որ այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ: Մենք առաջիկայումս կենք հաստատապես խոսել միայն մեկի մասին: Դա «Աղեւախաղ» ֆոն «Վալիսիանայի» կամ արձանագիրը բարբարոսութեան երեք տասներորդ դարում... ի նորս արկածս» վերնագրով «Եղերբերգութիւնն» է, որի թեման վերցված է խաչակրաց արշավանքների պատմութիւնից, բուն հեղինակն առաջ հայտնի չէ:

«Աղեւախաղ» առաջին գործողութեան սկզբի մի փոքրիկ մասը տպված է Արուսեանի «Երկերի լիակատար ժողովածուի» 1947 թ. վերջերին լույս տեսած Դ. հատորում, հեղինակի արխիվում պահպանված այդ մասի ինքնագրի համաձայն: Տպագրված այդ պատմական վերաբերյալ հիշյալ հատորի համապատասխան ծանոթագրութեան մեջ ասված է միայն, թե՛ «Ինքնագիրը... պահպանվում է Երևանի թանգարանում, Արուսեանի արխիվ № 11», թե նրա «թարգմանութեան թվականն անհայտ է» և թե՛ «տպագրվում է առաջին անգամ» (էջ 325):

Նախ այս ծանոթագրութիւնից չի իմացվում, որ այդ ինքնագիրը գրվածքի միայն առաջին գործողութեան սկիզբն է: Ծանոթագրողը չի էլ փորձում որևէ բացատրութիւն տալ այդ երկի անավարտ մնացած լինելու և հարակից այլ հարցերի վերաբերյալ: Ի հարկե, եթե խոսքը միայն այս պատմական վերաբերվել, անշուշտ ճիշտ է, որ, դա «տպագրվում է առաջին անգամ», բայց Դ. հատորը կազմողին ու ծանոթագրողին հայտնի չի եղել, որ «Աղեւախաղ» եղերբերգութիւնը ունեցել է մի այլ, արդեն ամբողջական ձևագիր, որը և այդ հատորի հրատարակութիւնից ճիշտ մեկ դար առաջ սկսվել է տպագրվել Արուսեանի կենդանութեան օրով Թիֆլիսի «Կովկաս» շաբաթաթերթում 1846 թ. վերջին (№ 49, դեկտեմբերի 7) և 1847 թ. առաջին համարում (№ 1, հունվարի 4), դժբախտաբար, սակայն, տպագրութիւնը մնացել է անավարտ: Թեև վերջին համարում տպված հատվածից հետո նշված է «շարունակութիւնն ի միւս թերթն», սակայն նույն տարվա հետագա համարներից ոչ մեկում շարունակութիւնը չի տպված:

«Աղեւախաղ» ըստ երևույթին եվրոպական որևէ գրողից կատարված թարգմանութիւն է: Անհայտ է գրութեան (հայերեն թարգմանութեան) թվականը: Իսկ այն փաստը, որ երկը գրաբար լեզվով է՝ ամենևին չի կարող հիմք տալ ենթադրելու, թե այն գրված կամ թարգմանված է ավելի վաղ՝ քան, ասենք՝ «Վերք Հայաստանին» կամ Արուսեանի մյուս աշխարհաբար երկերը: Հայտնի է, որ Արուսեանը նույնիսկ «Վերք» գրելիս չի հրաժարվել զրաբարից (վեպի նշանավոր հավելվածը՝ «Ջանգին»՝ զգալի չափով զրաբար է). ավելին. «Վերքից» հետո էլ՝ Արուսեանը մինչև իր կյանքի վերջը՝ աշխարհաբարին ղուլլընթաց գրել է նաև զրաբար, մեծ մասամբ բանաստեղծութիւններ:

Պիեսի լեզուն զրաբար է, ըստ երևույթին այն պատճառով, որ Արուսեանը

յանը հաշվի է առել «Կովկաս»-ում տպագրվելու հանգամանքը, մի թերթ, որի պաշտոնական լեզուն գրաբարն էր, թեև մեկ-մեկ տպագրում էր նաև աշխարհաբար լեզվով նյութեր:

Արուսյանի արխիվում պահպանված նյութերում, ըստ որում և նրա նամակագրության մեջ ոչ մի հիշատակություն ու ակնարկ չկա «Ազելախի-զայի» մասին, բայց նշենք, որ ոչ մի հիշատակություն չկա նաև հեղինակի ոչ մի այլ ղեղարվեալական երկի մասին: Հետևաբար, եթե նրա արխիվում պահպանված չլինեի այդ պիեսի փոքրիկ պատառիկը, ոչ ոքի մըտքով չէր անցնի, թե Արուսյանի զրական ժառանգության հետ որևէ առնչություն ունի «Կովկաս»-ում տպված այդ գրվածքը:

Եվ իրոք կարելի է, որևէ հիմք կա «Կովկաս»-ում տպված «Ազելախի-զայի», որն անստորագիր է՝ վերագրել Արուսյանին, ելնելով միայն այն փաստից, որ հեղինակի արխիվում պահպանված է նույն գրվածքի սկզբի պատառիկը:

Մինչև այժմ հայտնի չի եղել, որ Արուսյանը որևէ կապ է ունեցել «Կովկաս» թերթի հետ, նկատի ունենալով այդ թերթի զրական-զաղափարական ուղղությունն իբրև կղերա-պահպանողական օրգանի, որը զգալի չափով կովկասյան փոխարքայական «Кавказ» թերթի հայերեն պատճենն էր:

Վաղուց ի վեր հայտնի է Արուսյանի աշխատակցությունը «Кавказ» թերթին: Իսկ «Կովկասին» աշխատակցելու մասին ոչ մի վկայություն ու հիշատակություն չկա՝ Արուսյանի այնքան հարուստ անձնական նամակագրության ու պաշտոնական զրագրության մեջ:

Այնուամենայնիվ բնական հարց է առաջ գալիս, որ եթե Արուսյանը կարող էր աշխատակցել Կովկասի փոխարքայական պաշտոնական ռուսերեն օրգանին, ինչու նա ցանկություն ու պահանջ չէր զգա աշխատակցելու նաև իր ժամանակի կովկասյան միակ հայերեն պարբերականին՝ «Կովկաս» շաբաթթերթին (որի խմբագիրներն էին Հ. Կարենյանը և Արզանյանը): Համենայն դեպս փաստ է «Ազելախիզայի» տպագրվելն այդ թերթի էջերում, ինչպես և նրա անավարտ մնալը, որը շատ ուշագրավ մոմենտ է Արուսյանի զրական հասարակական գործունեության մեջ:

Համառոտակի անգրագատությանը այն հարցին, թե ինչ հանգամանքներում է սկսվել «Ազելախիզայի» տպագրությունը և վերջինիս ընդհատումը: Այս հարցին անվերապահ ճիշտ պատասխանելու համար որևէ ուղղակի վկայություն չկա: Բայց կան անուղղակի տվյալներ, որոնք կարող են լույս սփռել մեզ հետաքրքրող այս հարցի վրա:

Մենք նկատի ունենք այն վկայությունները, որոնք վերաբերում են Արուսյանի՝ 1844—47 թ. թ. ընթացքում Երևանից Թբիլիսի կատարած այցելություններին և Թբիլիսիի հետ՝ այդ տարիներին Արուսյանի ունեցած կապերին: Հայտնի է, որ Հ. Արիխի ճանապարհորդությունը Հայաստանում ձրագրելու առթիվ, Արուսյանը 1844 թ. ապրիլի վերջերին եղել է Թբիլիսիում ու այնտեղից նա առաջնորդել և ուղեկցել է հիշյալ գիտնականին՝ ուսումնասիրելու Հայաստանը երկրաբանական տեսակետից: Բայց այդ ժամանակ դեռ ոչ «Кавказ»-ը և ոչ էլ «Կովկասն» էր հրատարակվում, այդ երկու պարբերականների էլ հրատարակությունն սկսվում է 1846 թվի սկզբից՝ հունվարից, միաժամանակ՝ 7-օրյա պարբերականությամբ:

Այդ թերթերի հրատարակության հենց առաջին օրերից Արովյանը՝ ցանկություն ու մտադրություն է ունեցել աշխատակցելու և իր աշխատակցություն սկսել է «Кавказ»-ից, որին, ինչպես վերևում նշեցինք՝ նա ուղարկում է տպագրելու իր «կազմած մի քանի դիտողությունները»՝ «տեղիս» (=Երևանի) ողի բարեխառնության մասին»։

Պետք է ենթադրել նաև, որ Արովյանը մտադրվել է միաժամանակ աշխատակցիլ և «Կովկաս» թերթին, ըստ որում նկատի ունենալով այդ թերթի պաշտոնական լեզուն (գրաբար), երեի հարմար է գտել իր աշխատակցությունն այստեղ սկսելու «Ադելաիդայով», որն՝ ինչպես իր «Օդերևութաբանական տեղեկությունները», ուղարկել է գուցե ծանոթ Վարդկանց միջոցով, հնարավորություն չունենալով ինքն անձամբ հանձնելու այն՝ խմբագրության։

Բայց եթե ձեռագիրը տպագրության հանձնելիս Արովյանն անձամբ չի եղել Թբիլիսիում, ապա նրա տպագրության ընդհատումը զուգահեյում է Արովյանի՝ 1847 թ. հունվարի սկզբին այնտեղ լինելուն։ Ավելին, կարելի է ենթադրել, որ Արովյանի հենց այդ այցելությունը Թբիլիսի՝ բացասական առումով բախտորոշ նշանակություն է ունեցել «Ադելաիդայի» շարունակության տպագրման համար։ «Սովետական Հայաստան» թերթում տպված մեր հոդվածում (1948 թ. հուլիսի 2-ի №-ում) մենք ենթադրաբար գրել էինք, թե՛ «Ադելաիդայի» տպագրության դադարեցումն ըստ երևույթին եղել է ի թիվս այլ պատճառների, գուցե և այն պատճառով, որ 1847 թ. հունվարին... թերևս Արովյանի անձնավորությանը վերաբերվող քաղաքական նկատառումներ՝ հարկադրել են խմբագրությանը դադարեցնելու մեծ լուսավորչի գրչին պատկանող այդ երկի շարունակության տպագրությունը։ Նշել էինք նաև, որ «Կովկասի» հետագա համարներից ոչ մեկում որևէ ակնարկ չկա «Ադելաիդայի» մասին, ամբողջովին լուրջության է մատնված այդ փաստը։

Այդ մասին ոչ մի հիշատակություն չկա նաև Արովյանի արխիվում պահպանված նյութերում։ Գուցե եղել են հիշատակումներ՝ Արովյանի մեզ չհասած անհայտ նամակներում ու գրություններում, որոնց թիվը բավականաչափ մեծ է (այդ մասին կանգրադառնանք առանձին)։

1846 թվի ընթացքում Արովյանը բազմիցս դիմում է դպրոցների կովկասյան վերատեսչին, թույլտվություն խնդրելով Թբիլիսի գնալու (տես «Դիվան Խ. Արովյանի» հ. Ա, 1941 թ. էջ 174, 176, 178)։ Բայց Արովյանի բոլոր այդ դիմումներն ու խնդրանքները խստորեն մերժվում են՝ այն պատճառաբանությամբ, թե իբրև Արովյանը պետք է դպրոցի վերանորոգումն սկսի ու ավարտի և հետո թույլտվություն ստանա Թբիլիսի գնալու համար։ Վերջապես նույն տարվա վերջերին՝ դեկտեմբերի 11-ին՝ Արովյանը ավարտած լինելով դպրոցի շենքի պահանջվող վերանորոգումները, նորից՝ այս արդեն չորրորդ անգամ, դիմում է վերատեսչին նույն խնդրով՝ թույլտվություն ստանալ իր արձակուրդի հաշվին 14 օրով Թբիլիսի գնալու։ Այս անգամ էլ սակայն, Արովյանի դիմումը մերժվում է, հակառակ այն խոստման, որ տված է եղել վերատեսուչը Արովյանին դեռ տարվա սկզբին

¹ «Դիվան Խ. Արովյանի» հ. Ա. էջ 172.

² Նույնը. էջ 178.

հունվարի 5-ի № 12 առաջագրութեամբ, որի մասին հիշեցնում է Արովյանն իր վերջին գիծուծի մեջ:

Նորից մերժում ստանալով, Արովյանն այս անգամ արգեն այլևս չի պատում թույլտվութեան և 1847 թ. հունվարի 5-ին ինքնակամ գնում է Թբիլիսի:

Եղած գրութեանները ոչինչ չեն ասում կոնկրետ, թե Արովյանն ինչու էր վճռել անպայման այդ թվականին (1846 թ.) 14 օրով Թբիլիսի գնալ և այնտեղ թիկնաբեր գործով է զբաղվել, — նույնպես հայտնի չէ: Բայց հայտնի է, որ նա Թբիլիսիում ներկայացել է ուսումնական մասի կառավարչին: Հասկանալի է, որ ցարական չինովնիկը ուրախութեամբ չէր դիմավորի իր անհնազանդ ստորադրյալին: Եվ համար քանի օր հետո, ն. թ. հունվարի 11-ին Արովյանն ստանում է գլխավորների վերատեսչի գրությունը, որով նրան արվում է «հանդիմանություն» «Անդրկովկասի ուսումնական մասի պ. կառավարչի՝ հունվարի 7-ի № 16 թղթի» հիման վրա, «առանց նախապես իշխանութեան թույլտվությունն ստացած» Թբիլիսի գնալու համար և առաջարկվում «անմիջապես վերադառնալ պաշտոնատեղին»:¹

Հայտնի չէ թե Արովյանը Թբիլիսի եղած ժամանակ երբ է ներկայանում ուսումնական մասի կառավարչին՝ ժամանելուն պես, թե՛ հետո: Բայց հայտնի է, որ նա մնացել է այնտեղ 7—8 օր միայն և հանդիմանություն պարունակող գրությունն ստանալու հաջորդ օրն իսկ՝ վերադառնում է Երևան: Այդ մասին է վկայում Արովյանի մի անթվակիր գլուխը՝ ուղղված գլխավորների վերատեսչին՝ իսրև անմիջական պատասխան իր ստացած հանդիմանագրի՝² հայտնելով, որ ինքը հրաժարվում է աշխատանքից, անկարող գտնելով այլևս նման պայմաններում աշխատելը:

Կարևոր է հիշել նաև, որ ինչպես հայտնի է, նախ քան Թբիլիսի գնալը՝ 1846 թ. հունիսի վերջերին, Արովյանը ենթարկվում է «երեք օրվա կալանքի պատժի» Անդրկովկասի գլխավորների վերատեսչի «առաջադրութեան հետևանքով», «նորին պայծառափայլություն կովկասի կառավարչապետի կամքով», այն «հանցանքի» համար, որ իբր նա՝ Արովյանը՝ «ագեղ վարմունք» է ցուցաբերել «ներսես կաթողիկոսի Երևան մուտք գործելու ժամանակ»:

Բայց իրականում, ինչպես ասում է Արովյանը՝ Երևանից գրած իր բացատրականում (1846 թ. հունիսի 18-ին), «դրա պատճառն այն անախորժ դեպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս դավառապետի միջև, մանավանդ անցյալ (= 1845 թ.) տարվա հանդիսավոր ակտի ժամանակ...», որի մասին Արովյանը ն. թ. նոյեմբերի 24-ի իր № 126 թղթով գեկուցել է գլխավորների վերատեսչին:³

Արովյանի հետ պատահած անախորժ դեպքերը չլին կարող չանդրադառնալ և նրա գրական գործունեության վրա: Մենք հնարավոր ենք համարում, որ «Աղելաիդայի» տպագրութեան ընդհատվելն ուղղակի կապ ունի հիշյալ «անախորժ դեպքերի» հետ: Ըստ որում կամ գլխավորների ուսումնական մասի կառավարչի միջամտութեամբ՝ «կովկասի» խում-

¹ «Իման», էջ 178:

² Նույն տեղում, էջ 221:

³ Նույն տեղում, էջ 178:

բազրույթանն առաջարկվել է դադարեցնել հիշյալ երկի ազգագրության շարունակությունը և կամ հենց ինքը խմբագրությունը՝ «շրջանայաց» լինելով, տեղեկանալով Արովյանի հետ պատահած այնքան «անախորժ դեպքերի» մասին, իսկույն գիրքորոշվում է. այլևս թույլ չտալով «Աղեւախաղայի» «շարունակությունն ի միւս թերթն», եվ իրօք, դեպքերի զուգագիպությունն այնքան ակնհայտ է, որ այլ ենթադրություն չի կարող արվել Այսպես. «Աղեւախաղան» սկսել է տպագրվել «Կովկասի» 1846 թ. դեկտեմբերի վերջին՝ 49-րդ համարում: Առաջին գործողության շարունակությունը տպվել է թերթի հետևյալ՝ 1847 թ. X-ում, որ լույս է տեսնում թվի հունվարի 4-ին: Ինչպես նախորդ, նույն և այդ X-ում՝ խմբագրությունը նշել է «Շարունակությունն ի միւս թերթն»: Այդ «մյուս թերթը» այսինքն լրագրի հաջորդ՝ 1847 թվի 2-րդ համարը, ուր լինելու էր պիեսի շարունակությունը, լույս է տեսել № 1-ից 7-ը որ հետո՝ հունվարի 11-ին: Իսկ Արովյանը Թբիլիսի է գնում հունվարի 5-ին: Ուսումնական մասի կառավարչի գրությունը գպրոցների վերատեսչին գրվում է նույն հունվարի 7-ին, դրա հիման վրա վերատեսուչը գրում է Արովյանին հունվարի 11-ին. այսինքն նույն օրը, երբ լույս է տեսել «Կովկասի» հերթական համարը (№ 2-ը), արդեն առանց «Աղեւախաղայի» խոստացված շարունակությունը:

Հետևաբար «Աղեւախաղայի» մնացած մասի տպագրությունն անկասկած արգելվել է Արովյանի հետ նույն շրջանում պատահած «անախորժ դեպքերի» առնչությամբ:

Իսկ ինչ է ներկայացնում «Կովկասում» տպվածը Արովյանի արխիվում պահպանված պատահիկի համեմատությամբ:

Արովյանի արխիվում պահպանված հատվածի և «Կովկաս» թերթում տպագրվածի համապատասխան մասի համեմատությունը ցույց է առնում զգալի տարբերություններ, որոնք կարող են համարվել նույն թարգմանչի երկու անգամ կատարած թարգմանության տարբերություններ:

Ցույց տալու համար, թե ինչ բնույթի և ինչ չափի են այդ տարբերությունները, բերենք դրանցից մի քանի օրինակ: Նախ՝ վերնագիրը. Արովյանի արխիվում պահպանված հատվածի վերնագիրն այսպես է. «Աղեւախաղայի ֆոն Վուլֆինգեն, կամ յիշատակարան բարբարոսության երեք տասաներորդ գարուն», իսկ «Կովկասում» տպվածի վերնագրում «յիշատակարան»-ի փոխարեն՝ տպված է՝ «թրճանագիր»:

Այստեղ գործող անձանց ցանկում տարրեր է նաև գլխավոր հերոսների աղջկանվան վերջավորությունը՝ «Վուլֆինգինենան», բայց բուն տեքստում պատահում է նաև՝ առանց եամ վերջավորության՝ ֆոն Վուլֆինգեն:

Արովյանի ինքնագրում երկը կոչվում է «Եղբերգություն ի 4 խաղ», իսկ «Կովկասում»՝ «Ի չորս օրվա մաս»: Առաջինում գործող անձինք կոչվում են «խաղացող անձինք», իսկ երկրորդում՝ «դերասանք»: Նրանց անուններն ու կոչումները նույնպես որոշ չափով տարբեր են: Այդ տարբերությունները կարելի է տեսնել հետևյալ զուգահեռ համեմատությունում.

Արսվյանի ինֆեզարում № 11 ձեռ.

Խ ա դ ա ռ ա օ ի ն

Տեսարանն է բաց տեղի մի ի գեղջ միում հեթանոսաց, ի յետին կողմն տեսարանին խորտակեալ զնի կուռքըն առիւծագլուխ, լանջք նորա մորթապատ, յաջոյ ձեռին կալեալ զմտհակ. ի գլուխն ունի զթոշուն, նման զազի... յերկուս կողմունս տեսարանին գտանին մարմինք կողոպտեալք, ուսնք ևս այրեալք, խուղք ծխապատք և աւերեալք:

Տ Ե Ս Ի Ղ Թ Ո Ւ Յ Ի Ն

Թեօրալգ և զինակիրն (դիմեն ընդ աւերակս կոյս)

«Կովկաս» № 49, 1846 թ.

Դ ի լ ւ Վ ա ծ Թ Ո Ւ Յ Ի Ն

Տեսարանն առաջի առնէ զաւերակս գեղջն կոապաշտից. ի յետին կողմն տեսարանին կայանկեալ տապասաղրօշեալ առիւծագլուխ, կուռք իւր պատեալ մորթովք, յաջոյ ձեռին ունի զկայծակունս, ի գլուխն զթոշուն նման սագի. յաջմէ և յահեկէ մերկացեալ և խանձոտեալ դիակունք, և հիւղք կիսախարխուլ և ծխեալք:

Վ ա ր ա գ ու յ ր Ա.

Ճէորալգ և զինակիր (ելանեն ի միջոյ աւերակացն)

Այսքանն էլ բավական է որոշ գաղափար կազմելու Արսվյանի ինքնագրի և «Կովկաս» թերթում տպւածի միջև եղած տարբերութիւնները մասին: Այս համեմատութիւնը ցույց է տալիս, որ տարբերութիւններն իրոք զգալի են: Իայց նկատի ունենալով հենց այդ տարբերութիւնները՝ կարելի է ենթադրել, որ «Կովկասում» եղածը տպագրվել է Արսվյանի հետագա, ամբողջական ինքնագրից, որն ըստ երևույթին մնացել է հիշյալ լրագրի արխիվում և մեղ չի հասել: Իսկ Արսվյանի արխիվում պահպանվածը (№ 11 ձեռագիրը) կարելի է համարել հեղինակի կատարած թարգմանութիւն նախընթաց սկսվածքը, որ կիսատ է թողել նա, ու հետո նորից սկսել և ավարտել թարգմանութիւնը՝ հանձնելով այն հիշյալ լրագրին տպագրելու համար:

«Վերք Հայաստանի» հալտնի «Հառաջաբանում» Արսվյանն ասում է. «Ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ...»¹ Այս խոստովանութիւն հիման վրա կարելի է ենթադրել, որ հեղինակի արխիվում «Աղեւիագայի» պահպանված պատառիկը հենց այդ սկսած ու կիսատ թողնված թարգմանութիւններից մեկն է:

Իայց և՛ թե, մինչև իսկ հաստատապես պարզվի, որ «Կովկասում» տպւածը Արսվյանին չի կամ այդ տպւած հատվածի մեջ անհայտ ինքնագիրը նրա ստորագրութիւնը չի կրում, այնուամենայնիվ առայժմ դրանով միայն կարելի է մոտավոր գաղափար կազմել այդ երկի բովանդակութիւնն ու բնույթի մասին, որը դրավել է Արսվյանի ուշադրութիւնը: Իայց մենք չենք կասկածում, որ «Կովկասում» տպագրվածը Արսվյանի գրչին է պատկանում և ոչ մի այլ հեղինակի:

Պահպանված ձեռագիր հատվածի և տպագրվածի համապատասխան մասի միջև եղած լեզվական խմբագրական տարբերութիւնները հիմք չեն տալիս «Կովկասում» տպւածը համարելու այլ հեղինակի թարգմանութիւն, մանավանդ որ այդ տարբերութիւնները շատ փոքր ու աննշան

1. Արսվյան—Հետիւր երկեր, հ. 1. 1939 թ. էջ 6.

են Արքայանի մի այլ թարգմանության երկու տարբեր վարիանտների («Օվսաննա» և «Լինգա») միջև եղած տարբերությունների համեմատությամբ: (Տես Արքայանի «Երկերի լիակատար ժողովածու», հ. 4-րդ, էջ 263—285 և 295—311):

Վերևում ասացինք, որ հայտնի չէ թե ումից է թարգմանված այս երկը: «Աղելաիդայի» աղբյուրը փնտրելիս՝ զրականության պատմության ուսերեն աղբյուրներում հանդիպեցինք երկու գրվածքի, որոնց վերնագրերում հիշվում է Աղելաիդա անունը:

ա) «Сестра Аделейда, ее заблуждения, слабости и раскаяние», перевод с франц. яз. Москва, 1789 г.

Այս երկը հիշատակվում է Ն. Ի. Նովիկովի (1744—1818) հրատարակչական գործունեությանը վերաբերող աշխատություններում¹ և ուսումնականության բիրիոգրաֆիաներում:²

Այդ աղբյուրներում չի հիշատակված հիշյալ երկի հեղինակի անունը՝ իմացվում է միայն, որ դա թարգմանություն է ֆրանսերենից:

բ) Նույն անունը (Աղելաիդա) պարունակող վերնագրով մի գրվածք ունի 18-րդ դ. ֆրանսիական լուսավորության հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Ժան Ֆրանսուա Մարմոնտելը (1723—1799), որի այդ գրվածքի լրիվ վերնագիրն այս է. «Ալպիական հովվուհի Աղելաիդան»: Ակադեմիկոս Ն. Մ. Դերժավինն իր «Բուլղարիայի պատմության» 3-րդ հատորում հիշատակում է այդ գրվածքը, իբրև սերբական աղագյին դարթոնքի էպոխայի խոշորագույն լուսավորիչներից մեկի՝ Դոսիֆի (Դմիտրի) Աբրազովիչի (1743—1811 թ.թ.) թարգմանություն,³ որ կատարված է XIX դ. սկզբին: Այդ գրվածքներից ոչ մեկը չկա Երևանի գրադարաններում, որպեսզի կարելի լիներ ստուգել, թե Արքայանի «Աղելաիդան» որևէ առնչություն ունի այդ երկերի հետ: Հիշյալ պատմագրական աղբյուրներն էլ կոնկրետ դադարի չեն տալիս այդ գրվածքների բովանդակության մասին: Իմացվում է միայն, որ դրանք դրամատիկական երկեր չեն, ուրեմն Արքայանի աղբյուրը եթե դրանք են, ապա «Աղելաիդա ֆոն Վուլֆինգենյանը» թարգմանություն չէ, այլ ինքնուրույն ստեղծագործություն, որի մեջ գուցե օգտագործված է ասենք, Մարմոնտելի կամ մյուս անհայտ հեղինակի երկի նյութը՝ սյուժեն: Համենայն դեպս առաջիկա որոշակի ոչինչ չենք կարող ասել Արքայանի «Աղելաիդայի» աղբյուրի մասին:

Այդպիսով, Արքայանի երկերից «Աղելաիդա ֆոն Վուլֆինգենյան» եղբերգությունը առաջիկա մեղ հայտնի միակ գեղարվեստական գործն է, որ սկսել է տպագրվել հեղինակի կենդանության օրով, բայց այն էլ, դժբախտաբար անավարտ մնացել: Սակայն անհավանական չէ, որ այլ նյութեր ևս տպագրված լինեն Արքայանին ժամանակակից հայ և ուսումնականում, որ մեզ համար դեռևս անհայտ են մնում:

¹ В. П. Семенников—Книгоиздат. деятельность Н. И. Новикова и типографич. компании, 1921 г.

С. Г. Светлов—Издательская деятельность Н. И. Новикова, 1946 г.

² В. С. Соликов—Опыт российской библиографии. ч. IV, 1905 г., стр. 87.

³ Академик Н. С. Державин—История Болгарии. том III, 197 г., стр. 75.

Իսկ ինչ է ապագրվել Արովյանի գեղարվեստական հրկերից նրա ողորդական կորուստից հետո՝ հաջորդ երկու տասնամյակում՝ 50—60-ական թվականներին։ Առաջին հայացքից այս հարցը էլ ավելի է թվում անտեղի։ Մէթն լրիվ չափով հայտնի չէ թե ինչ է ապագրվել։ Ջարմանալի է, բայց փառա է, որ այդ երկու տասնամյակի ընթացքում պարբերական մամուլում Արովյանի մի քանի երկերի ապագրված լինելը նույնիսկ արովյանապետների համար կարելի է հայտնագործություն համարել։

Այս առնչությամբ նախ տեղին ենք համարում այստեղ վերհիշել Արովյանի մահից երկու տարի հետո՝ 1850 թ. մարտի 31-ին Ջոյունիայի «Արշալույս Արարայան» լրագրում ապագրված նրա «Աշխարհիկ բարբառ երեսնցի հայոց» փոքրիկ պատմվածքի հայտնագործության պատմությունը։ Իսկապես առաջ լրագրի թե այդ և թե նախորդ ու հետագա տարիների լրիվ կամպիլեկտները կան երևանում՝ Մատենադարանում, ուր արովյանագետները կարող էին հանդիպած լինել Արովյանի հիշյալ պատմվածքին։ Տպագրելով Արովյանի այդ պատմվածքը, «Արշալույս Արարայանի» խմբագրությունը վերնագրի տակ նշել է՝ «Իրեալ ի պատուելի Սաչատուր վարժապետի Արովյան»։

Դեռ 1861 թ. «Կոստանկ Հայոց աշխարհի» ամսագրի հուլիսյան գրքում Մ. Տեր-Աղաբյանն իր հայտնի հոդվածում («Միկ քանի խոսք Արովյանի վերա») հաղորդում է, որ՝ «Արշ. Ար.» լրագրի 1850 թ. 31 մարտի 160 համարումը (պետք է լինի 360, Ա. Ա.) տպված է մի փոքր պատմություն, իբրև օրինակ երեսնցի աշխարհորեն բարբառի։ Մենք չենք իմանում, թե ով է հասցրել այս հոդվածը հարդելի հրատարակչին, բայց պետք է ասել, որ նրա մեջ մի քանի տեղերում ճանկաստանի հայերի ոճ է գործ դրված և առանձին փոփոխություն»։

Մ. Տեր-Աղաբյանից հետո 32 տարի անց, 1893 թ., Արրահամ Այվազյանն իր հայտնի «Շար հայ կենսագրություն» աշխատության Բ. հատորում Արովյանին նվիրված կենսագրական հոդվածում (էջ 76—90՝ «Քանաքեռցի Սաչատուր») նույնպես հիշատակում է «Լիվիի» «Արշ. Արարայան» լրագրուն 160 թվոյն մեջ երևանու գովառաբարբառով տպված փոքրիկ պատմություն մը»։ Նույն հիշատակումն արված է նաև Արովյանի «Երկերի» 1897 թվի հրատարակության՝ Սա. Տեր-Սարգսյանի դրած առաջաբանում և այլն։ Ահա, այս ամենից հետո՝ 1941 թ. մայիսին, պատմաբան ընկ. Մ. Ներսիսյանն էլ «Ս.Հ.» թերթում հաղորդում է, որ ինքը Լևոյի արխիվը նայելիս, հանդիպել է «Արշ. Ար.» թերթի մի համարի, որ պարունակում է Արովյանի վերահիշյալ պատմվածքը (տես «Ս.Հ.» 1941 թվի մայիսի 10-ի համարը)։ Արովյանի այդ պատմվածքի հեղինակային ինքնագիրը չի պահպանվել։ Բայց զարմանալի է, որ Արովյանի երկերի Դ. հատորում հեղինակի հիշյալ պատմվածքի մասին գրված ծանոթագրության միակ աղբյուրը

¹ «Կոստանկ Հայոց աշխարհի», 1861 թ. հուլիս, էջ 341.

² Ա. Այվազյան—Շար հայ կենսագրություն. Բ. հատոր, 1893 թ. էջ 87։ Ըստ երեսույթին Այվազյանն անձամբ չի կարդացել Արովյանի պատմվածքը «Արշ. Արարայանի» մեջ. այդ երեսույթն է նրանից, որ նա թերթի № 2 հիշա ցումը չի տալիս, այլ կրկնում է Տեր-Աղաբյանի տեղը՝ № 360-ի փոխարեն նշելով № 160.

եղել է ընկ. Մ. Ներսիսյանի վերահիշյալ հաղորդումը: Բայց «Աշխարհիկ բարբառի» ավելի քան մեկ տասնամյակ հետո տպագրված մի քանի այլ երկերի էլ տպագրված լինելը նույնպես ճշգրտություն է ոչ միայն ընթերցող հասարակության, այլև արուստիանյանների համար:

Այսպես ահա, Արուստիանի ակադեմիական հրատարակության այդ (հեղինակի արձակ երկերն ամփոփող) հատորից դուրս են հանվել հեղինակի երկու արձակ գրվածք, որոնք տպագրվել են Արուստիանի անհայտացումից 16 տարի հետո, 1864 թվին, Պետրոս Արմոնյանի «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, իսկ մինչ այդ ու նրանից հետո նրանցից մեկը չի շատակվել է Արուստիանի վերաբերող մի քանի հոգվածներում, բայց ոչ իբրեւ տպագրված, այլ իբրեւ անտպագրված: Մենք նկատի ունենք «Ազնես» թղթով պատմություն» վերագրված նամականի պատմվածքը, տպագրված «Մեղու Հայաստանի» 1864 թ. № 12, 13, 14, հեղինակի շատ հետաքրքրական ու արժեքավոր նախաբանով, որը հիշեցնում է մասամբ «Վերջ Հայաստանի», մասամբ «Պարապ վախտի խաղալիքի» ու «Ֆեոդորա կամ որդիական սեր» գրամայի նախաբանները: Մյուսը՝ «Ազնվամուսթյուն և շնորհակալություն» վերագրված պատմվածքն է. տպված՝ նույն «Մեղու Հայաստանի» 1864 թ. № 14, 15: Երկուսն էլ աշխարհաբար են, գրված, ըստ երևույթին «Վերջից» անմիջապես հետո և երկուսի էլ ինքնագրերը դժբախտաբար չեն պահվել: Արուստիանի մեզ հասած արխիվում: Այդ նշանակում է, թե նրանք եւ «Ազնվախոյի» ամբողջական ձեռագրի բախտին են արժանացել, այսինքն՝ հանգել են «Մեղու Հայաստանի» խմբագրության կամ խմբագրի և կամ հրատարակչի արխիվներում ու անհայտացել:

Արուստիանի այս երկերի մասին հիշատակում կա մեծից աստի՛ Մ. Տեր-Աղաբյանցի վերահիշյալ հոգվածում (հիշումն է այդ աշխարհի» 1861 թ. հունիս, էջ 546), երբ այդ երկերը գեռ չէին տպագրվել: Այս հիշատակումն են Ա. Այվազյանի «Շար» հայ կենսագրություն» նույն գրքում (էջ 88), Արուստիանի «Երկերի» 1897 թ. հրատարակության առաջաբանում (էջ 34—36), հերթականությամբ չորրորդ անգամ Արուստիանի «Դիվանի» Ա. հատորին կցված նյութերի ցանկում (էջ 363) և վերջապես 5-րդ անգամ նրանք չի շատակվում են վաստակավոր արուստիանյան Երվանդ Շահադիդի 1945 թ. հրատարակված աշխատության մեջ («Ս. Արուստիանի կենսագրություն», էջ 99): Իսկ այդ զարմանալին այն է, որ այդ բոլոր հիշատակումները անելիս, հիշյալ արուստիանյաններից ոչ մեկը ցույց չի տալիս, թե ո՞ր և ո՞րտեղ են Արուստիանի այդ երկերը տպագրվել: Տեր-Աղաբյանը հիշատակել է դրանք մինչև նրանց տպագրվելը, անձամբ տեսած լինելով հեղինակի ձեռագրերը: Արուստիանի մանանդների մոտ, նրա մյուս երկերի ձեռագրերի հետմիասին, իսկ մյուս հեղինակները (Ա. Այվազյան, Ստ. Տեր-Սարգսյան, Ե. Շահադիդ) ելնում են միայն Տեր-Աղաբյանի հոգվածից, իրենք անձամբ կարդացած չլինելով այդ երկերը ոչ հեղինակի արխիվում և ոչ էլ տպագրվածք՝ «Մեղու Հայաստանի»-ում, ուր այդ երկերը կրում են հեղինակի լրիվ ստորագրությունը («Ազնեսի» վերջում՝ «Թարգմանեաց Սալատուր Արուստիան», մյուս պատմվածքի վերջում՝ «Աշխատասիրեաց Սալատուր Արուստիան»): Իսկ որ «Ազնես» թղթով պատմությունն ունի նաև նախաբան, այդ տրգեն «Ազնեսի» հետագա հիշատակողները չեն թմայել: Մ. Տեր-Աղաբյանն էլ այդ նախաբանի մասին չի նշել, թեև օգտագործել, մեջբերում է կատարել:

նրանից իր հոգվածում՝ առանց ցույց տալու բուն աղբյուրը և դրանով զարմանք ու տարակուսանք առաջացնելով հեռագա շրջանի բանասերների մեջ: Այդպիսով, ազգայնական հեռ էլ. ավելի քան ութսուն տարի, բոլորովին աննայա է հասցել այդ ծավալով փոքր, բայց Արովյանի համար շատ բնորոշ և արժեքավոր նախաբանը, որը մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ մեջբերել ամբողջությամբ:

«Էս ողբալի պատմությունը միտքն էն ա, որ մեկ ազնվական տղա, երեխի ազգի որդի. մարդկանց մեջ ընկնելով էն տեղն ա հասնում, որ ազգակա ա գառնում: Բայց էս ազգակա ժամանակն էլ իր ազնվությունը, բարեսրտությունը չի թողնում: Վերջապես մեկ աղջիկ ա սիրում, փախցնում, աբ ընկերների խոսքովը սարումը մենակ թողում, ինքն էլ հետո ձեռք ա ընկնում: Ինչքան պատիժ, խոստումներ նրան անում են, որ ընկերներին մատի. չի անում ու վերջը ինչ գիշեր որ իր սիրած աղջիկն ա մեռնում, էն գիշերն էլ սա է հոգին տալիս: Սրա գրողը մեկ երեխի կին ա, որ շատ զբոսբեր ունի շինած: Թող կարդացողը էնդուր չի մտիկ անի, որ ես աշխարհաբար եմ շրջել ու գեա փոքր կոշտ ա: Թող զարմանա, թե կնիկ արմատն էլ Եվրոպումը զալածած ել գիտի:

Ախ, երբ, ինչ սրտով որ գիշերը քունս կտրած, էսպես բաները գրում եմ, մուրազս տեղը կհասնի, թե չէ: Երաբար լավ, օսալ ես էլ գիտեմ, սովա ես էլ ուզում եմ, որ մեր խալիսը օգուտ ունենա, մեր աղնիվ ազգը, որ մինչև էսօր լեզուն փակվել, զրաբառը չի կարում սովորել, չի հասկանում, աշխարհաբար լեզուն էլ գիտցողի աչքին փուշ ա երևում, լեզի, թեև ինքն էլ հենց էն լեզվովն ա իր սիրտը, հոգին հայտնում: Բո լեզուն եմ լսել երեխությունիցս, իմ սիրելի ազգ, քո քաղցր լեզվովն ա սիրտս բաց էլել: Լեզուն դաբաղ բառը չի, հոգին ա մարդիս: Թող դու հասկանաս և իմանաս, որ քո հեա խոսալը ինձ համար ավելի քաղցր ա. քանց մեծ մեծ դրաբառ կոտրատել, էլ սրտումս գարդ չի մնալ: Տասը հազարը թող հասկանան ու կարգան, մեկ քանի ջուխտ ու կենտ խոսողի ասածին ու ծիծաղելուն զըլում: Բայց քաշ արած մտիկ կանեմ: Ամենի սրտին գիր դալ չի ըլիլ: Ամա ցամփ էն ա, որ բաղի գիտուն մարդ որ մեկ դարդակ թասկերս էլ, ոչ աշխարհաբար, ոչ դրաբար օրինավոր չի կարող գրել, սաղմոսը կարդալիս էլ շատ գիր ու բար սաղ սաղ ա կուլ տալիս. նա էլ ա մարդի վրա խոսում: Բերանն աղբի:

Ահա այս նախաբանից հետո՝ թերթի հաջորդ էջի սկզբից սկսվում է «Ազնեա. թղթով պատմությունը»: Առաջին հայացքից դժվար է նկատվում, որ «Բանասիրական» վերնագրի տակ նախորդ էջում տպված այդ նախաբանը կարող է որևէ կապ ու առնչություն ունենալ հաջորդ էջում տպված նամակների պատմվածքի հետ, մանավանդ որ խմբագրության կողմից ոչ մի նշում ակնարկ չի արված այդ մասին:

Այնուամենայնիվ դժվար է հավատալ, որ ինչպես «Ազնեա»-ն ունի պես և նրա մեծարժեք նախաբանը հետագա բանասերների աչքից վրիպել է: Բայց որ իրոք արովյանապետ-բանասերները չեն նկատել այդ նախաբանն էլ բերնիք հետևյալ շատ համոզիչ փաստը: Բիշ առաջ նշեցինք, որ այդ նախաբանը Լ. Տեր-Սևակյանն օգտագործել է իր հոգվածում, բայց

1 «Մեղու Հայաստանի», 1864 թ. № 13, էջ 101, «Բանասիրական» վերնագրի տակ:

բուն աղբյուրը ցույց չի տվել և շփոթեցրել է հետագա բանասերներն. նա իր հոգովածում մեջ բերումն էր է կատարում մեծ մասամբ «Վերք Հայաստանի» «Հառաջարանից» և բուն վեպից, «Պարագ վախտի խաղալիքի» «Հառաջարանի» և այլ աղբյուրներից: «Վերքի» «Հառաջարանից» բերված քաղվածքից տնօրջապիս հետո, Տեր-Աղարյանը մի քաղվածք էլ բերում է այն ժամանակ դեռ անտիպ «Ազնեսի» նախաբանից (ամա ես էլ ուղում եմ...» բառերից սկսած մինչև վերջ), բայց իբրև աղբյուր ցույց է տալիս դարձյալ «Վերք Հայաստանի» «Հառաջարանը»: Եվ ահա 36 տարի հետո՝ Արուսեանի «Երկերի» 1897 թվի հրատարակության խմբագիրը և նույն հատորի առաջարանի հեղինակ Ստ. Տեր-Սարգսյանը, կարգացած չլինելով 36 տարի տուաջ ապագրված «Ազնեսի» իր նախաբանով՝ դարմանք ու տարակուսանք է հայանում: Թե Տեր-Աղարյանը որակելից է վերցրել այդ կտորը, քանի որ ցույց տրված աղբյուրում («Վերքի» «Հառաջարանում») այդպիսի տողեր չկան: Այդ առթիվ նա գրում է. «Մի բան՝ որ մեղ շատ դարմացրեց և որի հիշատակութունն այստեղ մենք ալիքի քան ի դեպ ենք համարում, այս է. Մ. Տեր-Աղարյանի հայտնի հոգվածում, «Վերք Հայաստանում, Ողբ հայրենասիրում» հառաջարանից հանված՝ հայանի պարբերությանց շարքում մի այնպիսի կտոր էլ է բերված, որ ոչ առաջին տպագրության մեջ, ոչ էլ պարոն Վարդան Արուսեանի ուղարկած պատճենում չկա: Ահա այդ կտորը, որ «Կոռնկի» 1861, հուլիսի 549 էջի Ծ-րգ տողի «Բեղարում...» բառից և երկու կետից հետո սկսելով վերջանում է նույն էջի 17-րդ տողի վերջին բառով ու հոգվածագրինույն երեսում գրած ծանոթությամբ ցույց է տված այսպես՝ «Վերք Հայաստանի» երես 9»:

Այնուհետև Տեր Սարգսյանը մեջ է բերում «Ազնեսի» նախաբանի նույն այն հատվածը, որ Տեր-Աղարյանը մեջ է բերել իր հոգվածում, իբրև քաղվածք «Վերքի» «Հառաջարանից»:

Պարզ է, որ եթե Ստ. Տեր-Սարգսյանցը անձամբ կարգացած լիներ «Ազնեսի» իր նախաբանով, ապա կհիշեր, որ Տեր-Աղարյանի բերածը այդ նախաբանից է վերցված և չէր զարմանա, այլ ընթերցողին կտեղեկացներ Տեր-Աղարյանի պատահական սխալը, ցույց կտար թե որտեղ է տպագրվել «Ազնեսը», և այնուհետև Արուսեանի այդ երկը հայանի կդառնար ոչ միայն հետագա շրջանի արուսեանագետներին, այլև Արուսեանի բազմահազար ընթերցողներին: Իսկ այդ ամենի հետ մեր այս «հայտնագործութունն» էլ ավելորդ չլիներ:

Կարևոր հարց է «Ազնեսի» հեղինակի հարցը: Ումնից է թարգմանված. Արուսեանն իր գրած հատուկ նախաբանում միայն ակնարկում, բայց ուղղակի չի հիշատակում հեղինակի անունը: Ո՞վ է այն «մեկ երևելի կին զրոգը», «որ շատ զրքեր ունի շինած», և որն իր ստեղծագործությամբ զրավել ու ոգևորել է հայ մեծ լուսավորչին: Արուսեանի ապրած շրջանում և նախորդ դարում եվրոպական գրականության մեջ «երևելի կին զրոգ»-ներ շատ կան. — անգլիական գրականության մեջ՝ Աննա Ռադկլիֆ (1764—1823), Կլարա Ռիվ (1729—1807), Ելիզավետա Բարրիս Բրուու (1806—1861), Նիդերլանդական գրականությանից՝ Ելիզավետա Վուլֆ (1738—1804), Անթա Դիկենս (1741—1804), ֆրանսիական գրականությանից՝ Մարի Կոտտեն

1 և Արուսեանի «Երկեր, Մուկվա, 1897 թ. խմբագրից» էջ 26

(1770—1807), մեծահռչակ ժուրժ Զանդը (1804—1876), Ստ. Ժանլիսը (1746—1830), Մարի Դ. Ֆլավինյի դ'Ադու կամ Դանիել Ատերն (1805—1876) և ուրիշներ:

Արուվյանի ասած «երևելի կին զրոգը» սրանցից մեկն ու մեկը պետք է լինի: Երևանի զրադարաններում այդ զրոգների երկերի լրիվ ժողովածուները չկան ու ոչ մի այլ աղբյուրից առայժմ հնարավորություն չունեցանք որոշելու թե Արուվյանը նրանցից ումը նկատի ունի:

5.

Արուվյանի մի քանի հանրահայտ հրկերի առաջին տպագրությունները ուշադիր համեմատելով պահպանված հեղինակային ինքնագրերի հետ, պարզվում է, որ զրանք ղդալիորեն տարբերվում են: Պարզվում է, որ այդ երկերը տպագրվել են հեղինակի՝ այժմ չպահպանված ինքնագրերից, բայց կարծվել է թե հենց հեղինակի արխիվում պահպանվածներն են տվյալ երկերի միակ ձեռագրերը, որոնցից կատարվել են զրանց բոլոր հրատարակությունները:

Այս կարգի երկերից ամենից առաջ հիշենք «Հաղարփեշեն» սատիրապոեմը, հայ և վրաց ժողովուրդների դարավոր եղբայրությունից այդ առաջին գեղարվեստական արտահայտությունը հայ նոր գրականության մեջ, մի ստեղծագործություն, որով հեղինակը ցայտուն կերպով ցուցաբերում է երկու բախտակից ժողովուրդների հոգեհարադատությունը և նրանց շահերի միասնությունն օտարերկրյա ճշմունքների դեմ:

Արուվյանի «Ընտիր երկերի» Բ. հատորի համապատասխան ծանոթագրության մեջ (էջ 391) ասված է, որ «Հաղարփեշեն» առաջին անգամ տպագրվել է Մեղու Հայաստանիում» (չի նշված, թե որ թվին և որ համարնեշում. Ա. Ա.), հետո էլ առանձին զրքով (1912 թ. Թիֆլիս): Ապա ասված է թե՛ պոեմի «ձեռագիրը գտնվում է Արուվյանի արխիվում»:

Այո, ճիշտ է, որ «Հաղարփեշեն»-ի հեղինակային մի ձեռագիրը գտնվում է Գրական Թանգարանի Արուվյանի արխիվում: Բայց ծանոթագրողը չի ասում, որ մեզ հասած այդ ձեռագիրը այն չէ, որի համաձայն Արուվյանի այդ երկը տպագրել է Պ. Սիմոնյանն իր շարաթաթերթում («Մեղու Հայաստանի» 1864 թ. № 17 և 18) առանց պոեմի հայտնի նախաբանի: Եղել է այդ սատիրապոեմի հեղինակային մի այլ ձեռագիր ևս, որն ղդալիորեն տարբերվում է արխիվում պահվող (№ 61) ձեռագրից: 1912 թ. առանձին զրքով, ինչպես և սովետական շրջանի երկհատոր «Ընտիր երկերի» Բ. հատորում և առանձին զրքույկով տպագրվածը հրատարակվել է այդ պահպանված (№ 61) ձեռագրի հիման վրա, մինչդեռ «Մեղու Հայաստանիում» առանց հեղինակի հայտնի նախաբանի տպագրվածը ղդալիորեն տարբերվում է № 61 ձեռագրից, ուրեմն և 1912 թ. ու «Ընտիր երկերի» Բ. հատորում, ապա և առանձին զրքույկով տպագրվածներին:

Երկա հոգվածում հնարավոր չէ եղած բոլոր տեքստային տարբերությունները յուրյ տալ: Այդ պատճառով է արվի հեղինակի երկերի ակադեմիական հրատարակության համապատասխան հատորում: Բայց այստեղ հարկ է նշել էականն ու կարևորը, որ վկայում է «Մեղու Հայաստանիում» տպվածի մի այլ ձեռագրից վերցված լինելու փաստը:

Նախ ծավալն է տարրեր. պահպանված ինքնագիրը ու նրա համաձայն 1912 ու 1910 թ. թ. («Ընտիր երկեր» Բ. հատոր) տպվածները բաղկացած են 388 տողից, մինչդեռ Պ. Արժանի շաբաթաթերթում տպագրածը 399 տողից է, ուրի՛ն 11 տողով ավելի է։ Բացի այդ, «Մեղու Հայաստանում» տպվածը հեղինակի արխիվում պահված ինքնագրի համեմատությամբ զգալի չափով ներքին, տերստային տարբերություններ ունի։

Հարկ է նկատել, որ Արժանի մասին եղած ուսումնասիրություններում ու լրագրական բաղմաթիվ հոդվածներում հատուկ ուշադրության առարկա չի եղել Արժանի այս գործը։ Միայն թուրքիկ մեկ երկու տողով նշվել է, որ «Հաղարփեն» պոեմում Արժանը «նկարագրել, ձաղկել ու ծաղրել է» ժամանակի բյուրոկրատիայի... սխրագործությունները» (Ա. Տերտերյան, «Արժանի ստեղծագործություններ», 1941 թ., էջ 356—7)։ Եվ այսքան միայն։ Այդ ճիշտ դիտողությանը, սակայն, կարելի է և պետք է էական լրացումներ անել «Հաղարփեն» գնահատելիս, նկատի ունենալով «Մեղու Հայաստանում» տպագրված նրա օրինակը։ Այս օրինակի պարունակած տարբերություններն ավելի որոշակի խոսում են այն մասին, որ Արժանը ծաղրում, ձաղկում է ոչ միայն ցարական բյուրոկրատիայի պաշտոնյաներին ընդհանրապես, այլ նաև, տվյալ դեպքում հատկապես ցարական կռավարության եվրոպացի աստիճանավորին։ Այդ վկայում է լուսավոր եվրոպացիների» նկատմամբ Արժանի ունեցած քննադատական հայացքի ու վերաբերմունքի մասին, որ ավելի ցայտուն կերպով կա նաև Արժանի մի շարք այլ երկերում ևս։

Բերենք մեկ-երկու օրինակ, որ հաստատում է մեր այս կարծիքը։ Արժանի արխիվում պահպանված ձեռագրում (ու դրա համաձայն տրված ենք) պոեմը սկսվում է այս տողերով.

«Մեկ իմաստուն մարդ մեր հաղարփեչի

Անունը լսելով...» և այլն։

Նույն ձեռագրում «իմաստուն մարդ» բառերի փոխարեն սկզբում եղել է «եվրոպացի», որը ջնջված է ու փոխարինված այդ արտահայտությամբ։ Արժանագետները դրան ուշադրություն չեն դարձրել կամ չնկատելով և կամ ջնջվածը կարդալ չկարողանալով (չատ ուշադիր պետք է նայել, որ կարդացվի թե ինչ է ջնջված)։ Բայց ահա «Մեղու Հայաստանում» տպվածն ուղղակի սկսվում է այսպես.

Մեկ եվրոպացի մեր հաղարփեչի

Անունը լսելով...» և այլն։

Բայց գուցե սա պատահական բառ է, որ Արժանի մեղ հասած ձեռագրում ինքը՝ հեղինակը փոխարինել է վերոհիշյալ արտահայտությամբ։ Բարեբախտաբար, ոչ, «Մեղու Հայաստանի» տպագրվածում (ուրեմն և մեզ անհայտ ձեռագրում) պոեմի հետագա մասերում շատ որոշակի է ասված, որ հեղինակը նկատի ունի եվրոպացուն, ցարական բյուրոկրատիայի եվրոպացի աստիճանավորին, որպիսիք շատ կային թե Անդրկովկասում և թե Ռուսաստանում ընդհանրապես՝ ցարական պետության ազգային արժանապատվությունից զուրկ ուս ազնվականության արեմտա-եվրոպականի հանդեպ ունեցած ստորաքաղաքական հետևանքով։ Ահա մեկ-երկու տող ևս.

Պոեմի 180—181-րդ տողերը պահպանված ձեռագրում այսպես են.

«Խեղճ վրաստանցիք մնացին սառած,
Իրա՞նց դոնադի ահվալը տեսած»...
Իսկ «Մեղու Հայաստանիում» երկրորդ տողն այսպես է.
«Եվրուպացու հալն ու ահվալը տեսած»
Այդպես էլ տարրեր է նաև 282-րդ տողը՝ Պահպանված ինքնագրում՝
«Իրանց հունարը մրանց վրա փորձեն»
(«Ներանց»՝ այսինքն «վրաստանցոց» վրա)
«Մեղու Հայաստանիում»՝
«Իրանց եվրուպիո հունարը բանացնեն»

Սակայն, բացի այդ էական տարբերություններ հաստատող տողերից՝ մեղ անհայտ և հայտնի ձեռագրերի միջև կան տեքստային այլ տարբերություններ ևս, որոնք է՛լ ավելի են հաստատում, որ իրոք «Մեղու Հայաստանի»-ում տպվածը «Հաղարփեչեն»-ի հեղինակային մի այլ ձեռագրից է՝ Իերենք այդ տարբերությունների հիմնական մասը. —

Պոեմի Պահպանված իմնագրում	«Մեղու Հայաստանիում»
5-րդ տող Զահլեն գնում էր (մաղաթիժ ըլում), սիրտը խառնվում:	Զահլեն գնում էր, մաղաթիժ ըլում, սիրտը խառնվում:
30 « Կթն են դեմ անում՝ գիտով լըց- րած:	Կթն են դեմ անում գիտին լըց- րած:
33 « Անգլուխ հայվան ըլի գես ու դեն ընկնում:	Սա ա կ ա ծ խ ո գ ի պ ե ս դ ե ո դ ե ն ա ը ն կ ն ու մ:
35—36 « Զէ, էսպես երկրում շունը չի կենալ, էսպես շան հաջաթն իրան բերնին աալ:	Կուլի համար էնպես են պաամում, Թե գինին կլկլալով, չափով ներս ածում, Ու ճոթաած դունչը հազար ֆոտ առ- նում: Զէ, էսպես երկրում շունը չի կենալ, էսպես շան հաջաթն իրան բերնին աալ:
50-րդ տող Քլիին [ու] ոտին վեր հաջ ելով տեսավ	Քլիին ու ոտին ծեծելով տեսավ:
51 « Որ մեկ քանի մի ջահել վրաս- տանցի:	Որ մեկ քանի Հայ ու վրաստան- ցի:
53 « Բաղերը քաղում, խաղողը [մղում]	Իրանցի գին քաղում, խաղողը մղում:
74 « Ու մեր մուղիկեն, մեր քաղցր սկրիպկեն:	Ու մեր մուղիկեն, սկրիպկեն, ֆլեո- տեն:
82 « Քո սերն ու շնորհքը, սրտիդ հաս- րաթը:	Քո սերն ու աաղանգը սրտիդ հասրաթո:
104 « Մեկ մեծ պարկ ուշունց ու հա- ղար անեծք:	Ու մեկ եքա ալ ու ք ուշունց ու անեծք:
106—109 Ես ա ուշունց տալով բերանս հոտե- րով: Լեզվիս ու փորիս բոլոր նյութն հա- տավ: էս աավարները, հաստաղլուխները Բերնիս չեն նայում, իմ ասածները	Մաշկնիկ ու էլ չմնաց: ու դուռակ չմնաց Օսլի, գվերի, էշուկի սև դիկի, Ասիով բերանս հոտեցավ, հենց բանի էս աավարները, էս սկոտները Բերնիս չեն նայում, իմ ասածները

- 115—116 Սաաանին առես, քեզ դժոխքը կտա-
տոգերը նի,
Դուել կկանչի, արինդ կթափի:
- 125 Փող պիտի շինած ու ծոցը զբաժ-
127—128 Քալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց
առալ:
- 131 Ամենի աչքն էլ վրեզ մայիլ թո-
ղած:
- 145 Էս առեսով պատիվ:
- 149 Էլի ջերդ կածես նրանց հոգին հա-
նես:
- 150—152 Քե խոսք էլ առես, քամակդ
դեմ առես,
Ասիացի մարդն գազան ինչ գի-
տի,
Որ քեզ հեռ խոսա, կամ հա-
մարձակվի:
- 157 Շատ էլ որ առես, մեկ պողոտա
կտան:
- 163 Գտակները գլխին, բերնին չի բխի
փետն:
- 179 Մի քիչ շունչ առնեմ, [ձեռ] իմ
գլուխը լամ:
- 184 Կամ իր ֆաթեքը մթնով հասցնին,
- 185 Որ այլք չտեսնեն, վրեն չծիծա-
ղեն:
- 194 Շիրի կարասը ընկավ նա կուփ,
կուփ:
- 204—205 Մեկ էլ որ առնին գոռ տվեց բի-
րադի,
Ջուխտ ոտով ընկավ սուրբ ոմբու
գլխին:
- 206 Ռուսերն կառաղեց, ուխտը բաց
արեց:
- 207 Մեր ուսյալ գծին խախտը քա-
շեց:
- 209—210 Մեկ էլ որ ուղեց բերանը բաց
անի,
Որ իր չկուլի աղոթքն եզասի:
- 216 Ու ջուխտ ոտով նրան էնպես
քացի տվեց:
- 217 Որ հենց ուղղում էր գլուխը հանի
- 218 Քամակի վրա էլ եզ շուն եկավ:
- Սաաանին առես, քեզ դժոխքը կտա-
նի
Մեր մեկին առես, փողով եր
կածի:
Դուել կկանչի, արյունդ կթափի:
Փող պեաք է շինած ու ծոցը զբաժ-
Քալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց
առալ:
Մարդ էլ որ ուղեն աչքներ չկո-
խած:
Ամենի աչքն էլ վրեզ մայիլ էլած:
Էսպես չեստ, պատիվ:
Էլի ջերդ կածես, նրանց աչքը
կհանես:
Քե մեկ խոսք խոսան, նեղնա-
յալ կառես:
Ասիացի մարդն ինչ գիտի գա-
կան:
Նրանցն ագիտին, մաթրախ,
յամակն:
Շատ էլ որ առես, մեկ պողոտա
կտանին:
Գտակները գլխին, չի բուխը բե-
նին:
Մի քիչ շունչ առնեմ, ձեռ հոռն
ուշունց առմ:
Նրան գինջացնին, աբաք-
ախը առնին,
Կամ ֆաթեքը մթնով հասցնեն:
Որ մարդ չի առնի վրեն չծի-
ծաղի:
Շիրի կարասու՞րը նա կուփ
կուփ:
Կառաղած եզը օրինակ ըլի,
Էնպես, որ մեկ գոռ տվեց ջա-
նին,
Ջուխտ ոտով ընկավ սուրբ ոմբու
գլխին:
Ռուսերն կառաղեց, բերանը բաց
արեց:
Մեր գոչադ, ուսյալ գիտունը
խտաեց:
Հենց ուղեց բերնին գոռ առ,
բաց անի:
Որ իր չկուլի աղոթքն առի:
Ու ջուխտ ձեռով նրան շափա-
լախ տվեց:
Որ հենց ուղղում էր կարած գլուխը
հանի:
Քամակի վրա կըտի պուզ էլավ:

- 240—242 ՝ Քոռաղաղինա, մեկ պղնձով նաֆթ
բերել էին, որ տեղերը կաշնեն,
Որ գինին չտանեն:
- 243—246 ՝ Խելոթ գինեգիժն հենց ֆլա-
սանդ ճարեց
Մեկ էլ իր ձեռք, որ չի բարձ-
րացրեց,
Ճղղաց, թրպրտաց, նաֆթի պղնձն
ընկավ,
Դու լավ կիմանաս, ինչ (ներս)
գլխին էկավ
- 252—258 ՝ Էլի մեր նաչար բարի վրաստանցիք,
Ուրիցը բանեցին, նրան դուրս քաշե-
ցին,
Ջուրը գցեցին, երեսը լվացին,
Դնացին գեղ բերին, կամ հեքիմ
կանչեն,
Ըլի իմաստունն՝ որ ափալթափալ
Հենց մեկ շունչ քաշեց ու քիչ դին-
ջացավ,
Թաքրար քար՝ փետի նավրա պրծավ:
- 264—266 ՝ Ձեռք չորս կողմը բոռը-բոռ ածելիս,
Բարերը պոկելիս, դռնին խփելիս՝
Որդիանց որտեղ մեկ հաղարփեշա
- 269—270 ՝ Դռնին որ չդրեց՝ աստված կան-
չելով
Իսկույն մեկ քանի հոգի ձեն
տալով
- 273 ՝ Քոթակ-ոտներով [խաբար] ջվալ բե-
րանով
- 285 ՝ Թոխմախ գլխներով բաժի տակ
չքցեն:
- 286—287 ՝ Հենց պլտուխները լցրին ուշուկով
Դուռակուղեմա՝ էկան ձեն ասլով
- 288—299 ՝ Մեր հայի մուշտեն, վրացու քացին
Էնպես թուռնդ դիպավ նրանց զըլ-
խին, փորին
- 300 ՝ Դիխները ջարդեն, նահատակ ա-
նեն:
- 303 ՝ Փիլիսոփեքին ցխից հանեցին
- 305 ՝ Էլ ձեն տալ նրանք հեշ կարող էին,
- 318 ՝ Ով կախեթու սուրբ բաժակի հաճ
- 333—338 ՝ Բեզ ճաշակելիս, էլ դուրսը ձեռին
Ման դա, չչլմի թոքաղցր հոտով,
Հինգ իրանկի խմի, բեղերն սրելով,
Էլի գուս դա լսւրջ ու պարծենալով
- Կոռաղաղինա մեկ պղնձով նավթ
բերել էին,
Որ աղերի ծակը կաշնեն,
Որ գինին նրանք չտանեն:
- Մեր նաֆթ աղբերը ձեռը
հենց վերցրեց
Խանձած, խորոված խոգի
գլխի պես,
Կամ պոկած, փետրած աք-
լոր հավի պես
Թոպրտաց, ճղղաց, նավթի պղնձն
ընկավ:
- Էլի մեր նաչար բարի վրաստան-
ցիքը ուրիցը
Բանեցին նրան, դուրս քաշեցին,
Ջուրը քցեցին,
Երեսը լվացին, գնացին գեղ բերեն
Կամ հեքիմ կանչեն, էլի գիտունն
Հենց ափալ թափալ, մեկ որ շունչ
քաշեց,
Ու քիչ դինջացավ, էլի քարի փետի
վրա պրծավ:
- Ձեռք չորս կողմը բոռ բոռ քարերը
պոկելիս
Դռնին խփելիս, որդիանց որտեղ մեկ
հաղար փեշա
- Ոտը քաշեց, սրախն, Աստված
կանչելով,
Էն սհաթը մեկ քանի հոգի ձեն
տալով
- Քոթուկ ստներով, խաբար բերանով,
- Թոխմախ գլխներով յախոյ չքցեն:
- Բան հոգի չըլեն, աքլուխ
չման
- Հենց պլտուխները լցրին ուշուկով
Արմյաշկա, դուռակ էկան հաշելով,
Մեր հայի մուշտեն, վրացու քացին
Էնպես մեկ դիպավ նրանց գլխին ու
փորին
- Դիխները ջարդեն, շնաստակ տանն
- Մեր փիլիսոփեքն ցխից հա-
նեցին
- Շուռը ձեն կտար, նրանք
տալ չէին:
- Ով կախեթու սուրբ դինոս հաճ
- Բեզ ճաշակելիս էլ դուրսը ձեռին
ման դա,
Չչլմի քաղցր հոտով, հինգ թուկի
խմի:

	Հազար տևո ասի, զիս օր խմեցի, Հինգ թունդի, կուգեմ քայց խմեմ էլի:	Բեղերը սրելով էլի դուս զա Շուրջ ու պարծենալով հազար ասի, Թե էս օր խմեցի հինգ թունդի, Կուգեմ թե խմեմ էլի:
339—340	Ինձ համար գինին, Բաի ջուրն մեկ ա Ինձ համար, որ նա կրակ էլ դառնա	Ինձ համար գինին ու Բաի ջուրը մեկ ա, Նա որ հենց կրակ էլ դառնա,
345	Քեք կանեմ ու իմ հոգսը կը հո- ղամ:	Իմ բանս կանեմ, իմ հոգսը կը հողամ,
358—360	Էս ա, որ հմիկ մեր ամեն բանը Փոխվել ա, ամա մեր գինու ջանը Դեռ կպրում մնում, դուր քանառում:	Էս ա որ մեր ամեն բանը փոխվել ա Ամա մեր գինու ջանը Դեռ կպրում մնում, Որ դուր քանացնեմ:
374—377	Ու մեզ էլ պահի, որ մեր Գախեթու Բաժակի դադրը միշտ իմանանք ու Միշտ հազար բերնով (հազար փեշեն բռնած) ու հազար ձեռով Հազար փեշեն բռնած, հազար օր ասենք:	Ու մեզ էլ պահի, որ մեր Գախեթու բաժակի Հազար միշտ իմանանք, ու միշտ հազար բերնով Մեր հազար փեշեն հազար ձեռով բռնած, հազար օր ասենք
338	Հազար շառից, շառից մեզ աղատ պահի:	Հազար շառից մեզ աղատ պահի:

Ահա այս համեմատական մեջբերումները (որոնք չեն սպառում բոլոր
եղած տեքստային տարբերությունները) անկասկած են դարձնում, որ
«Հազարփեշեն»-ը տպագրելիս Պետրոս Սիմոնյանը իր տրամադրությամբ
տակ ունեցել է ոչ թե Արսլանյանի արխիվում պահպանված ու մեզ հասած
ձեռագիրը (№ 61 ձեռագիր-տետրը), այլ մեկ ուրիշը, որը հետազայում չի
պահպանվել ըստ երևույթին մնալով Պ. Սիմոնյանի կամ նրա խմբագրած
պարբերականի արխիվում:

Մեր կատարած զուգահեռ համեմատական մեջբերումները, բացի այդ՝
հիմք են տալիս պարզելու նաև, թե այդ ձեռագրերից որն է որին նա-
խորդել՝ «Մեղուում» տպված ձեռագիրը պահպանվածին, թե՛ ընդհան-
րապես:

Նկատի ունենալով դրանց միջև եղած տեքստային տարբերություն-
ների լեզվական-ոճական առանձնահատկությունների որակը՝ եզրակացը-
նում ենք, որ Արսլանյանի արխիվում պահպանված ձեռագիրը, (որի հիման
վրա կատարվել են «Հազարփեշեն»-ի բոլոր 3 հրատարակությունները
(1912—1941 թ.թ.) «Մեղու Հայաստանիում» տպվածի համեմատությամբ
գրականորեն ավելի քիչ է մշակված և հակված է դեպի լեզվի-ոճի դրա-
կանացումը, տեղ-տեղ էլ կան երևույթի պատկերման տեսակետից անճիշտ
արտահայտություններ ու համեմատություններ, որոնք մեզ հայտնի պահ-
պանված ձեռագրում արդեն չկան, ըստ որում այդպիսի տեղերը կամ
հանված են ամբողջովին և կամ փոխարինված ավելի ճշգրիտ արտա-
հայտություններով:

Այդ տարբերություններն իրենց լեզվական-ոճական որակով ընդ-
հանուր առմամբ համընկնում են «Վերք Հայաստանի» և «Պարապ վախ-
տի խաղալիք» ժողովածույի մի քանի առակների պահպանված երկու տար-

րեր ձեռագրերի միջև եղած լեզվական-ոճական տարբերությունների որակին: Ըստ որում ականայտ է, որ, օրինակ «Վերք Հայաստանի» սևագիր օրինակի բազմաթիվ գրական ոճեր-տարատառություններ, մակդիրներ, մաքրագիր օրինակում փոխարինված են բարբառայինով — ժողովրդականով: Բերենք մի քանի նմուշ տարբերություններն ընդգծելով:

«Վերքի» սևագրում

«Մեր աղա չի ծիծաղաս... էս քացի-
խած պարոններին քեֆըներին կղիպ-
չի— տրախիդ կանեն. շան լափն
իրանց ղիլին շուռ կանան»:

«Դարդիմանդ կնիկը մարդի թշվառ
հալրա եսանելով, ու իր դարդո՞ւմ ու
առանջով՝ աեղիցը շարժեց, որ հա-
լիվորին բռնակ անի...» (ն.ա. էջ 213):

«Նոքարը տրադն անեց՝ սֆթա
աերաերին դեմ արեց» (էջ 216):

«Ինչ և իցե» (206)

«Ամենի աչքն քեզ է նայում» (207)

«Թագավորներն նախանձում են» (206)

«Թե մեր համշարիքը ինչպես են
սուղ անում» (255)

«Երդ մահալում» (255)

«Մայր և դստեր» (256)

«Դստեր» հերսու ուր է» (259)

«Նրկինքը կամենում էր, որ ամպերը
հավաքի...» (281)

«Արաշապատի զառն» (296)

«Վերքի» մաքրագրում

«Մեր աղա չի ծաղաս... կարելի ասե-
մեկ քացախած ճամբորթի քեֆին
դիպչի, տրախիդ անի, փալանը
շուռ ասա, հետո աուր ու զմրոց քո
ղիլին գա»:

«Դարդիմանդ առանկիկնք մարդի
խայառակութունը աեսավ թե
չէ՝ իր ցավը մոռացավ ու աեղիցը
ժամ էկավ, որ իր հալիվորին մի
քիչ բռնակ անի...» (ն.ա. էջ 20):

«Նոքարը որ տրադք չանեց, ավա-
լի սֆթա աերաերին դեմ արեց» (32):

«Ինչ անեա» (15)

«Ամենի աչքն վրեդ մայել» (18)

«Թագավորներն հասրաթդ քաշեն» (18)

«Թե ինչպես են մեր համշարիքն
իրանց սուքն անում» (72)

«Մահալում» (72)

«Մերն ու դստեր» (73)

«Աղջկեր» (դստեր) հերսու ու ուր
ա» (75)

«Գամեցավ երկինքն ամպերն հավաքի...»
(99)

«Արաշապատի զառն» (114)

Այս օրինակները հաստատում են, որ «Վերքի» վերջին՝ մաքրագիր տպագրություն համար հեղինակի պատրաստած ձեռագիրն իր ոճով-լեզ-
վով, ավելի ժողովրդական-բարբառային է, քան նրա սևագիր օրի-
նակը:

Այս նույնը կարելի է նկատել Արովյանի այլ երկերի երկուական
ինքնագրերը համեմատելիս:

Դրանում համոզվելու համար մեկ-երկու օրինակ էլ բերենք «Պարապ
վախտի խաղալիքից», ուր նույն առակի երկու ձեռագրի միջև եղած տեքս-
տային տարբերությունները նույն որակի են: Այսպես, ահա, «Մուլա Մաս-
րազնի պղինձը» հայտնի առակի առաջին ձեռագրում («Նախաշավիղում»,
որն ավելի վաղ է կադաված, քան առակների ժողովածուն) եղած գրեթե
բոլոր գրական-լեզվական ձևերը հետագայում փոխարինված են ժողովրդ-
դականով-բարբառայինով: «Ասաց» — «ասեց», է — ա («բնկեր է» — «բն-
կեր ա», «էկել է» — «էկել ա» և այլն), «այժմ» — «հիմիկ», «ու ընդվայր
տեղը» — «ու նը՛ախ տեղը», «մի քանի օրից հետո» — «մեկ քանի օրից

¹ Ն. Արովյան — «Երկերի լիակատար ժողովածու», Գ. հատոր, 1948 թ., էջ 245

² Նույն տեղը, էջ 68:

եղը», «էլի կծնանի» — «էլի կը ծնի», «Մուլլայի» — «Մուլլի» — «չպետք է ուղի» — «չի պետք է ուղի», «բայց ավելի շահն փորն ածակել», «Եվ վաճ մարգին, որ ասխելք ադահ է» — «Ով շատ ադահ է վաճ էն մարդին էլ»:

Նույն որակի տարբերություններ կան նաև «Ջարմանալի մարդիկը» առակի երեք տարբեր ձևագրերի միջև (առանձին № 107 սևագիր տետրում, ապա «Նախաշավիղում» և վերջինը՝ «Պարապ վախտի խաղալիքում»):

Բայց ոչ միայն «Վերքից» ու «Պարապ վախտի խաղալիքից», Արուստյանի մյուս՝ մեկից ավելի ինքնագրեր ունեցող երկերից նույնպես կարելի է բերել նույնատիպ տեքստային տարբերություններ, լեզվական ոճական փոփոխություններ, որոնց ընդհանուր տեղեկանքն է զուտ գրական-նր փոխարինել ժողովրդականով՝ «հարիր հազարին» ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Եվ ահա մասնավորապես «Վերք Հայաստանի» և առակների տարբեր ինքնագրերի միջև եղած լեզվական-ոճական տարբերությունները համեմատելով «Հաղարփեշեն»-ի պահպանված հեղինակային ինքնագրի և «Մեղու Հայաստանիում» տպագրվածի միջև եղած նույնատիպ տարբերությունների հետ՝ եզրակացնում ենք, որ «Մեղու Հայաստանիում» տպված ինքնագիրը նախորդել է պահպանված ինքնագրին: Դրանում համոզվելու համար հարկ չկա այստեղ մեջ բերել օրինակներ, այլ պետք է միայն ուշադիր նայել վերևում դուգահեռ բերված քաղվածքները, որոնց միջև եղած այդ բնույթի տարբերություններն ակնհայտ են:

* * *

Ուշադիր հետադոտությունը ցույց կտա, որ հայ նոր գրականության հիմնադրի մի շարք այլ ձևագրեր ևս մեղ չեն հասել, բացի այն երկերից (ինչպես օրինակ «Նախաշավիղի» առաջին վարիանտի՝ հեղինակի կենդանության օրով տպագրվածը, «ՊՎՆ»-ի առաջաբանի և այլ ինքնագրերը), որոնց ձևագրերի՝ մեզ հասած չլինելը հայտնի է արդեն: Բերենք մի օրինակ ևս: Մ. Տեր-Աղարյանն իր հոդվածում («Կոունկ Հայոց աշխարհի» 1961 թ. № 7) մեջ բերելով Արուստյանի արխիվում պահպանված քիչ թե շատ ուշագրավ ձևագրերի ցանկը, ի միջի այլոց նշում է, որ «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամատիկական երկը ունի երկու ձևագիր, մեկն առանձին, մեկն էլ մեզ արդեն հայտնի, «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի ինքնագրի վերջում եղածը: Տեր-Աղարյանը գրում է. «Այս տետրակի (իմա «Պարապ վախտի խաղալիքի» Ա. Ա.) վերջումը պատահում է կրկին անգամ մեզ «Ֆեոդորա» անունով շարադրությունը: Այս վերջին օրինակը առաջինի հետ չենք բաղդատել իմանալու համար, կա սրանց մեջ դանադանություն, թե ոչ, բայց նյութը մեկնույնն է»¹:

Այս ևս կարող է լրացուցիչ հիմք տալ՝ հաստատելու, ու «Աղելաիդան» ևս ունեցել է երկու ձևագիր, որից մեղ հասել է միայն նախնականը՝ անավարտը, իսկ լրիվը մնացել «Կովկասի» խմբագրության արխիվում:

¹ «Կոունկ Հայոց աշխարհի», 1961 թ. № 7. էջ 346:

Մինչդեռ Արովյանի «երկերի լիակատար ժողովածուի» 4-րդ հատորում ինչպես «Աղելաիդային», նույնպես և «Ֆեոդորային» վերաբերող համապատասխան ծանոթագրություններում ոչ մի տող հիշատակություն չկա այդ երկերի անհայտ ձեռագրերի մասին: «Ֆեոդորայի» ծանոթագրությունից իմացվում է միայն, որ նրա «ինքնագիրը գտնվում է «Պարապ վախտի խաղալիք»... ժողովածուի հետ միասին մի տետրում... Պահվում է Դրական Թանգարանում, Արովյանի արխիվ № 56...» իսկ Տեր-Աղարյանի տեսած ու հիշատակած առանձին ձեռագրի մասին ոչինչ չի կարելի իմանալ այդ ծանոթագրությունից:

Այս և այլ փաստերը վկայում են, որ հայ մեծ լուսավորիչ, մեր նոր գրականության անմահ նախահայր Արովյանի գրական ժառանգությունը դեռ շատ քիչ է ուսումնասիրված: Մեծանուն գրողի «անհայտ բացակայություն» այս տարվա սեպտեմբերին նշվող 100-ամյա հոբելյանը, բարեբախտ առիթ է, որ պետք է խթանի բոցաշունչ, անձնագորհ հայրենասերի հարուստ կյանքն ու գրական ժառանգության խոր ու բաղադրականի ուսումնասիրության գործը: Իսկ այդ գործի հաջողության լավագույն ցուցանիշներից մեկը պետք է լինի անմահ գրողի «երկերի լիակատար ժողովածուի» ութհատորյա ակադեմիական հրատարակության հաջող ավարտումը, որը ինելու է նրա անմահության հուշարձանը, իր մայր ժողովրդի սոցիալիստական աղջային վերածննդի դարաշրջանում:

1948 թ.

Օգոստոս